Արձանագրություն N 3
«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-24/19» ծածկագրով Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Протокол N 3
Заседание комиссии по процедуре консалтинговых услуг по техническому надзору качества работ по капитальному ремонту дворовых территорий и детских площадок административного района Аван города Ереван под кодом EQ-BMKhTsDzB-24/19

ք. Երևան 11.03.2024թ., Ժամը՝ 11:00

г.Ереван 11.03.2024г., Время: 11:00

Նիստի անցկացման վայրը՝

Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 309 սենյակ
Место заседания: мерия г. Ереван (ул. Аргишти 1), комната 309

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մուրադյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մինասյան, Վ.Վենյամինով, Հ.Գասպարյան, Հ. Աղաբալյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ.Գրիգորյան

Участвовали:
Председатель комиссии: В. Мурадян,
Члены комиссии: М. Минасян, В.Вениаминов, А. Гаспарян, Агабалян,
Секретарь комиссии: М. Григорян

1. Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին
Сведения о наличии необходимых документов и об их соответствии установленным требованиям

(Վ. Մուրադյան, В. Мурадян)

1.1 Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, արձանագրել է հետևյալը.

1.1 Оценочная комиссия, изучив представленные участниками заявки, констатировала следующее.

1.1.1 Պարտադիր ներկայացման փաստաթղթեր.

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերը, և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ **«ՍՏՐՈՅ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի** մասնավորապես. Մասնակցի կողմից ներկայացված լիազորագրում անհրաժեշտ է հստակ նշել ընթացակարգի ծածկագիրը և նշված մրցույթի շրջանակներում լիազորվող անձին փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրման լիազորության վերապահելու մասին:

1.1.1 Обязательная подача документов

В электронных пакетах, представленных всеми участниками, содержат документы, подлежащие обязательному представлению и соответствуют требованиям, установленным приглашением за исключением ООО " СТРОЙ ПРОЕКТ " в частности: В доверенности, поданной участником, необходимо четко указать код процедуры и о предоставлении уполномоченному лицу полномочий на электронное подписание документов в рамках указанного конкурса:

1.1.2 Մասնակիցների կողմից ներկայացված ոչ գնային պայմանները բավարարող

1.1.2 В представленных участниками документах, отвечающих неценовым условиям, имеются следующие несоответствия:

Մասնակցի անվանումը Имя участника	Անհամապատասխանություն Несоответственность	
	աշխատանքային ռեսուրսների մասով по части трудовых ресурсов	մասնագիտական փորձառության մասով по части профессионального опыта
ԱՁ Վահրամ Կնյազյան ИП Ваграм Князян	Բացակայում է Отсутствует	Համապատասխանում է Соответствует
«ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ ООО " БУЛГАРО "	Բացակայում է Отсутствует	Բացակայում է Отсутствует
ԳՐԻՏԻԳ ՍՊԸ ООО ГРИТИГ	Բացակայում է Отсутствует	Համապատասխանում է Соответствует
«ՆԱՐ ԷԿԱԼ ԷՔՍ» ՍՊԸ ООО "НАР ЭКАЛ ЭКС"	Համապատասխանում է Соответствует	Չի համապատասխանում՝ 1-ին չափաբաժնի մասով Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի գումարների հանրագումարը փոքր է մասնակցի գնային առաջարկից
ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ ՍՊԸ ООО Эй Ви Эн Груп	Համապատասխանում է Соответствует	Բացակայում է Отсутствует
<<ՍՏՐՈՅ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ ООО "СТРОЙ ПРОЕКТ"	Բացակայում է աշխատակազմում ներառված աշխատակցի դիպլոմը, անձնագիրը	Չի համապատասխանում Համաձայն հրավերի 2.4 կետի մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ելնելով վերոգրյալից, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 41-րդ կետի պահանջներով, որոշեց կասեցնել նիստը և ծանուցել 1.1.1 և 1.1.2 կետում նշված մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.2 Արձանագրված անհամապատասխանությունները 1.1.1 կետում նշված մասնակցի / **«ՍՏՐՈՅ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի**/ կողմից շտկվելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կմերժվի և կգնահատվի անբավարար՝ համաձայն Կարգի 42-րդ կետի, և կդիտվի ընթացակարգի շրջանակներում մասնակցի ստանձնած պարտավորությունների խախտում:

1.3 Արձանագրված անհամապատասխանությունները 1.1.2 կետում նշված մասնակիցների կողմից շտկվելու դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով:

Անհամապատասխանության չշտկումը չի հանդիսանա հայտի մերժման հիմք, այլ կանդրադառնա ոչ գնային պայմաններին տրված ընդհանուր գնահատականի վրա:

Неценовые условия, подтверждающие критерии квалификации, представленные другими участниками, соответствуют требованиям, установленным приглашением.

Принимая за основу пункт 41 порядка № 526-N от 4 мая 2017 года ,,Организации процесса закупок,, (далее-Порядок), утвержденного постановлением Правительства РА, оценочная комиссия решила приостановить заседание и уведомить участников, указанных в пунктах 1.1.1 и 1.1.2, в установленный

приглашением срок (в течение одного рабочего дня, следующего за днем получения уведомления) исправить зафиксированные несоответствия.

1.2 В случае исправления зафиксированного несоответствия участника, указанным в пункте 1.1.1, заявка участника будет оценена удовлетворительно, в противном случае будет отклонена и оценена неудовлетворительно, согласно пункту 42 порядка, и будут рассматриваться как нарушение обязательств участника в рамках процедуры.

1.3 В случае исправления зафиксированного несоответствия участниками, указанными в пункте 1.1.2, неценовые условия будут оцениваться в порядке, установленном приглашением, не исправления

зафиксированного несоответствия не станет основанием для отклонения заявки, а отразится на общей оценке не ценовых условий.

Ընդունվել է որոշում՝ կողմ -5 , դեմ - 0:
Принято решение: за -5, против – 0.

2. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
Об утверждении даты, времени и места проведения следующего заседания оценочной комиссии закупочной процедуры

(Վ. Մուրադյան, В. Мурадян)

Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը գնահատելուց հետո 13.03.2024 թվականին, ք. Երևան, Արգիշտի 1, 3-րդ հարկ 309 սենյակ հասցեում:

Оценочная комиссия решила созвать следующее заседание после оценки исправленных документов, представленных участником, 13.03.2024 г., по адресу г. Ереван, Аргишти 1, 3 этаж, комната 309 .

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:
Принято решение: за –5, против – 0.

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մուրադյան
Председатель комиссии: В. Мурадян

Մ. Մինասյան
М. Минасян

Վ. Վենյամինով
В. Вениаминов

Հանձնաժողովի անդամներ՝
Члены комиссии:

Հ. Գասպարյան
А. Гаспарян

Հ. Աղաբալյան
А. Агабалян

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գրիգորյան
Секретарь комиссии: М. Григорян